ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

Եղիշե Կիրակոսյան – Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

Լիպարիտ Դրմեյան - Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար

Աննա Շահնազարյան - Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

Դիանա Քարազյան – Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

Անահիտ Հարությունյան - Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի հետազոտությունների և զարգացման վարչության պետ

Դիանա Լեոնիդի - Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ շահերի պաշտպանության վարչության պետ

Ալինա Դավթյան - Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի վճիռների և որոշումների կատարման վարչության գլխավոր մասնագետ

Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ), 2023թ. մայիսի 10-ից 14-ը ներառյալ

Հրավիրող կողմը

Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

Գործուղման նպատակը

Գործուղման նպատակն է եղել ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1443-Ա որոշմամբ ստեղծված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) Եվրոպայի խորհրդի տարբեր կառույցների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպումների միջոցով ՀՀ կողմից Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունների կատարման՝ մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից ՀՀ վերաբերյալ կայացված վճիռների և որոշումների կատարման վերաբերյալ մի շարք հարցերի քննարկումը, ինչպես նաև ՄԻԵԴ-ի դատական ակտերի որոնման HUDOC համակարգի հայերեն տարբերակի շնորհանդեսին մասնակցությունը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման ընթացքում Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը (այսուհետ՝ Ներկայացուցիչ), Ներկայացուցչի գրասենյակի ղեկավարը (այսուհետ՝ Գրասենյակի ղեկավար), ինչպես նաև Գրասենյակի վերը նշված աշխատակիցները (այսուհետ՝ Գրասենյակի աշխատակիցներ) սույն թվականի մայիսի 11-ին և 12-ին մի շարք հանդիպումներ են ունեցել Եվրոպայի խորհրդի տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ: Երկօրյա այցին մասնակցել են նաև Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներից ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ՀՀ գլխավոր դատախազը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը և ՀՀ ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետը:

Մասնավորապես, Ներկայացուցիչը, Ներկայացուցչի գրասենյակի ղեկավարն ու Գրասենյակի աշխատակիցները մայիսի 11-ին հանդիպել են ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրեն Խրիստոս Յակումոպուլոսին: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին ՀՀ կառավարության և ԵԽ երկկողմ համագործակցության մի շարք ասպեկտներ: Յակումոպուլոսը հայտնեց ՀՀ կառավարությանը տարբեր ծրագրերի միջոցով աջակցելու ԵԽ պատրաստակամության մասին: Քննարկվեցին նաև ՄԻԵԴ-ի՝ ՀՀ դեմ կայացրած մի շարք վճիռների վերահսկողության գործընթացի բարդություններն ու առանձնահատկությունները: Յակումոպուլոսը բարձր գնահատեց Միջգերատեչական հանձնաժողովի ձևավորումը, ինչպես նաև նման բարձր մակարդակով այցի կազմակերպումը, ինչը ցույց է տալիս ՀՀ կառավարության բարձր պատասխանատվությունը կոնվենցիոն պարտավորությունների տեսանկյունից:

Իր հերթին Ներկայացուցիչը ընդգծեց Միջգերատեսչական հանձնաժողովի կարևորությունը՝ շեշտելով, որ վերջինս տարբեր գերատեսչությունների միջև երկխոսության բացառիկ հարթակ է՝ պետության կողմից ՄԻԵԴ-ի վճիռները կատարելու առումով: Ներկայացուցիչն ընդգծեց, որ Միջգերատեսչական հանձնաժողովը նախագահում է փոխվարչապետը, ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս ՀՀ բարձր հանձնառության մասին: Հանդիպմանը ներկա էր նաև ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արման Խաչատրյանը: Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներն իրենց հերթին բարձրաձայնեցին վճիռների կատարման պատրաստակամության մասին՝ ներկայացնելով նոր ծրագրերի առաջարկներ:

Հաջորդիվ տեղի ունեցավ «Վճիռների կատարման ինստիտուցիոնալ մակարդակի բարձրացման վերաբերյալ» խորագրով թեմատիկ քննարկում ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների տնօրեն Քրիստոֆ Պուարելի, ԵԽ Նախարարների կոմիտեի ՄԻԵԴ-ի

վճիռների կատարման վարչության պետ Կլեր Օվեյի մասնակցությամբ, որի ընթացքում Ք. Պուարելը նշեց ԵԽ տարբեր անդամ պետությունների կողմից ՀՀ փորձի նկատմամբ ունեցած հետաքրքրության մասին, ինչը ցուցանիշ է այն մասին, որ նման Միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորումը կարող է օրինակ ծառայել և լավագույն փորձ հանդիսանալ այլ անդամ պետությունների համար: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՄԻԵԴ-ի՝ ՀՀ վերաբերյալ մի շարք վճիռներով արձանագրված խնդրահարույց հարցեր, ինչպիսիք են գործերի ողջամիտ ժամկետում քննվելուն, ատելության խոսքին, հավաքների ազատությանը, արդար դատաքննությանը վերաբերող հարցերը: Վճիռների կատարման համատեքստում Կ. Օվեյն իր հերթին նշեց ներպետական մակարդակում իրազեկվածության և մտածողության որոշակի փոփոխության անհրաժեշտության մասին: Գրասենյակի ղեկավարը ներկայացրեց Գրասենյակի պատշաճ ջանասիրությունը ոչ միայն վճիռների կատարման, այլև՝ վճիռների կանխման առումով: Այս առնչությամբ Գրասենյակի ղեկավարը նշեց Գրասենյակի և կառավարության տարբեր գերատեսչությունների (որոնք նաև Միջգերատեսչական հանձնաժողովի մաս են կազմում) միջև գոյություն ունեցող սերտ համագործակցության մասին: ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը նշեց ՀՀ փորձը՝ համեմատաբար վերջերս ընդունված Կոնվենցիային կից 16-րդ արձանագրության հնարավորությունից օգտվելու առնչությամբ: ՀՀ գլխավոր դատախազն իր հերթին ուշադրություն հրավիրեց որոշ վճիռների կատարման օբյեկտիվ բարդությունների մասին, որոնք ընդունելի էին ԵԽ ներկայացուցիչների կողմից: Մարդու իրավունքների պաշտպանի և քննչական կոմիտեի նախագահի կողմից ԵԽ ներկայացուցիչների ուշադրությունը հրավիրվեց նաև սահմանամերձ բնակչության իրավունքների պաշտպանության հիմնահարցին:

Հաջորդիվ տեղի ունեցավ հանդիպում ԵԽ գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ: Հանդիպմանը ներկա էին Միջգերատեսչական

հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնատար անձինք, Ներկայացուցիչը, ինչպես նաև ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը: Հանդիպման ընթացքում Ներկայացուցիչը ներկայացրեց ՄԻԵԴ-ի վճիռների կատարման ուղղությամբ ՀՀ կառավարության քայլերը, անդրադարձավ Միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորմանը: Ներկայացուցիչը շեշտեց, որ Միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորումը մասնավորապես կնպաստի վճիռների կատարման ընդհանուր միջոցառումների իրագործման հարցում պետության կողմից միասնական ջանքերի գործադրմանը: Ներկայացուցիչը Գլխավոր քարտուղարի ուշադրությունը հրավիրեց Լաչինի միջանցի շրջափակման հիմնահարցին, ինչպես նաև Ադրբեջանի կողմից ՄԻԵԴ-ի կիրառած միջանկյալ միջոցի չկատարման խնդրին: Ներկայացուցիչը շնորհակալական և գնահատանքի խոսք հնչեցրեց նաև Գլխավոր քարտուղարի կողմից Լաչինի միջանցքի ապաշրջափակման վերաբերյալ կատարված հայտարարության առնչությամբ:

Մայիսի 11-ի վերջին պաշտոնական այցը տեղի ունեցավ ՄԻԵԴ-ի նախագահ Շիոֆրա Օ'Լիրիի հետ: Հանդիպմանը ներկա էին Միջգերատեսչական հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնատար անձինք, Ներկայացուցիչը, Գրասենյակի ղեկավարը, ՄԻԵԴ-ում ՀՀ դատավորը և ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը: Հանդիպման ընթացքում ՄԻԵԴ-ի նախագահը ներկայացրեց ՄԻԵԴ-ի վիճակագրության վերաբերյալ տվյալներ՝ այդ թվում ՀՀ մասով: Նախագահը անդրադարձավ նաև միջպետական գանգատներին նշելով, որ այս պահի դրությամբ ՄԻԵԴ-ում քննվող միջպետական գանգատներից 7-ը ՀՀ մասնակցությամբ գանգատներ են: Նախագահը բարձր գնահատեց ՀՀ կողմից ԵԽ առջև ստանձնած պարտավորությունների մասով նման բարձր մակարդակով հանձնառությունը: Ներկայացուցիչը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար և նշեց, որ նման ձևաչափով այց առաջին անգամ է տեղի ունենում, որի նախնական նպատակը ճանաչողական բնույթ է կրում: Ներկայացուցիչը հավելեց, որ Միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորումը ՀՀ կողմից իր

պարտավորությունները կատարելուն ուղղված կարևորագույն քայլ է, ինչը այցի ընթացքում ԵԽ մյուս գործընկերների կողմից բարձր է գնահատվել: Ներկայացուցիչը անդրադարձավ նաև ՄԻԵԴ-ի նախագահի հետ հանդիպման կարևորությանը՝ նշելով, որ այն կնպաստի ՄԻԵԴ-ի հետ երկխոսության հզորացմանը, ինչպես նաև սուբսիդիարության սկզբունքի ամրապնդմանը:

Մայիսի 12-ին ՄԻԵԴ-ում տեղի ունեցավ ՄԻԵԴ-ի դատական ակտերի որոնման HUDOC համակարգի հայերեն տարբերակի շնորհանդեսը, որին ներկա էին Միջգերատեսչական հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնատար անձինք, Ներկայացուցիչը, Գրասենյակի ղեկավարը, Գրասենյակի աշխատակիցները, ՄԻԵԴ-ում ՀՀ դատավորը, ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքների գերակայության ղեկավար կազմի ներկայացուցիչներ և ՄԻԵԴ-ի քարտուղարության մի շարք ներկայացուցիչներ: Շնորհանդեսը հեռարձակվում էր նաև առցանց հարթակում: Շնորհանդեսի ընթացքում մանրամասն ներկայացվեցին հարթակից հայերեն լեզվով օգտվելու հնարավորությունները: Ներկայացուցչի կողմից ընդգծվեց այս հարթակի կարևորությունը՝ մասնավորապես այսուհետ՝ Կոնվենցիան ուղղակիորեն կիրառող պաշտոնատար անձանց հասանելիության տեսանկյունից:

Հաջորդիվ տեղի ունեցավ հանդիպում ՄԻԵԴ վճիռների վերահսկողությունն իրականացնող ԵԽ նախարարների կոմիտեի հանդիպումների նախագահող, Լիխտենշտեյնի դեսպան Դոմենիկ Վանգերի հետ: Հանդիպմանը ներկա էին Միջգերատեսչական հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնատար անձինք, Ներկայացուցիչը, Գրասենյակի ղեկավարը, Գրասենյակի աշխատակիցները և ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը: Հանդիպման ընթացքում Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին ներկայացվեցին ՄԻԵԴ-ի վճիռների կատարման առանձնահատկությունները: Ներկայացուցիչը հատուկ ընդգծեց ՄԻԵԴ-ի կողմից կիրառվող միջանկյալ միջոցների կատարման նկատմամբ վերահսկողության

մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը՝ մասնավորապես միջպետական գանգատների քննության համատեքստում: Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Ստորագրություն, ամսաթիվ

17.05.2023

Եղիշե Կիրակոսյան

Լիպարիտ Դրմեյան

Աննա Շահնազարյան

Դիանա Քարազյան

Անահիտ Հարությունյան

Դիանա Լեոնիդի

Ալինա Դավթյան